

ՇԻՐԱԿԱՑ ԹԵՄԻՆ ՄԵՐ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱԻԱՐՏԻՆ, ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՒԽՏԱՎԱՅՐԻ ՕՋԱԽԻՑ ԱՂՕԹՔ ԵՄ ՎԵՐԱՌԱՔՈՒՄ ԱՌ ԲԱՐՁՐԵԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ

«Բարերար և բազումողորմ Աստուած, հայցում եմ Քեզանից, որ սիրոյ, լոյսի և հաւատքի ապրումներով լցնես սրտերն ու հոգիները Շիրակի տարածաշրջանում ապրող Քո հայկեան ցեղի զաւակներին, համայն արանց և կանանց, ծերոց և տղայոց, որք են ի նեղութեան իրենց տների աւերման, աշխատանոցների քանդման, վիրաւորուած կամ հիւանդ լինելու, գործազուրկ մնացած լինելու և այլ կարիքների պատճառներով:

Զօրացուր մեր հոգևորականներին և պետական ու քաղաքային իշխանութեան ապաստարաններին, ժողովրդի բոլոր խաւերին և դասակարգերին, յատկապէս դպրոցական երեխաներին և նրանց ուսուցիչներին, աշխատող մարդկանց, հիւանդներին, որբերին, վիրաւորներին, վաճառականներին, հողագործներին, արհեստաւորներին և արուեստագէտներին ու մտաւորականներին, հաստատութիւններին և կազմակերպութիւններին, որպէսզի կարողանան փութով վերականգնել իրենց անհատական, ընտանեկան և համայնական կեանքը և ի սպառ բուժել բոլոր վէրքերը երկրաշարժի պատճառած աղէտի:

Տէ՛ր, շնորհեա՛ ամենեցուն զերկնային իմաստութիւն և զհոգեւոր արիութիւն վասն պատերազմին կենաց ըստ Առաքելոյն Սրբոյն Պօղոսի (Բ. Տիմ. Դ. 7) զի կարող լինիցին բարւոք ընթանալ և զպսակն ժառանգել ի փառս Ամենակալին Աստուծոյ, ի շինութիւն ազգիս Հայոց, և ի պայծառութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց և ի բարօրութիւն Շիրակայ Տիրախնամ թեմին. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 մայիս 1995 թ.